

«ՀրազՋԷԿ» ԲԲԸ Գնահատող հանձնաժողովի

ՀՁ-ՄԱ-ԱՊՁԲ/ՅԱՆ-09/23.06.20-ԱՄ ծածկագրով MKII-110կՎ յուղային անջատիչի պահեստամասերի՝ աղեղմարիչ խուց-6 հատ, շունտային դիմադրություն-6հատ, շարժական կոնտակտ-6հատ և մոմ-6հատ գնման ընթացակարգի գնանշումային առաջարկների գնահատման և մատակարարման պայմանագրի կնքման մասին նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ում 26.06.2020թ. ժամը 14⁰⁰-ին:

Նիստին մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ա.Մնացականյան - ԳՏՏ-Գլխավոր ճարտարագետ

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝

Է.Մովսիսյան - նորոգման, շահագործման վարչության պետ

Հանձնաժողովի անդամներ՝

Տ.Մարտիրոսյան - գլխավոր ճարտարագետի տեղակալ նորոգման գծով

Ջ.Նաղդայան - գլխավոր ճարտարագետի տեղակալ շահագործման գծով

Ս.Հակոբյան-ԿՏԱ-2 պետ

Լ.Մնացականյան - Էլեկտրական արտադրամասի պետ

Գ.Քոչարյան – ԿՎԱ-ի պետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Ս.Մարգարյան - տնտեսագիտական վարչության առաջատար ճարտարագետ-տնտեսագետ

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ **օրակարգը**.

ՀՁ-ՄԱ-ԱՊՁԲ/ՅԱՆ-09/23.06.20-ԱՄ ծածկագրով MKII-110կՎ յուղային անջատիչի պահեստամասերի՝ աղեղմարիչ խուց-6 հատ, շունտային դիմադրություն-6հատ, շարժական կոնտակտ-6հատ և մոմ-6հատ հրատապ գնում Մեկ անձից ընթացակարգի գնային առաջարկների գնահատում:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 7, դեմ՝ 0:

«ՀրազՋԷԿ» ԲԲ ընկերության մասնագետների կեղմից ուսումնասիրվել է շուկան և պարզել, որ նմանատիպ պահեստամաս առկա են «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում: Նամակ և հրավերի տեքստ է ուղարկվել «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ -ի տնօրեն Հ Հարությունյանին անհրաժեշտ պահեստամասերի համար գնային առաջարկ ստանալու համար: Սակայն նրանք տեղեկացրեցին, որ մեզ անհրաժեշտ պահեստամասերը գտնվում են «ԲԻԴ» ապրանքա-հումքային բորսայի տրամադրության տակ: Պահեստամասերը ձեռք բերելու նպատակով դիմել ենք «ԲԻԴ» ապրանքա-հումքային բորսային աճուրդին մասնակցելու համար: 25.06.2020թ. «ԲԻԴ» ապրանքա-հումքային բորսայի կողմից կազմակերպված աճուրդին ճանաչվել ենք հաղթող մասնակից և կատարել գնում ընդհանուր պահեստամասերը՝ 1386000 դրամով: Ի մի բերելով կատարված գործարքը հանձնաժողովը **որոշեց**.

1. «ԲԻԴ» ապրանքա-հումքային բորսայից աճուրդով ձեքքերված MKII-110կՎ յուղային անջատիչի պահեստամասերը (աղեղմարիչ խուց-6 հատ, շունտային դիմադրություն-6հատ, շարժական կոնտակտ-6հատ և մոմ-6հատ) 1386000 (մեկ միլիոն երեք հարյուր ութանասունվեց հազար) դրամով՝ ներառյալ ԱԱՀ-ն, Մեկ անձից գնման ընթացակարգով գնումը գնահատել շահավետ:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 7, դեմ՝ 0:

Ա. Մնացականյան

Է. Մովսիսյան

Տ. Մարտիրոսյան

Ջ. Նաղդայան

Ս. Հակոբյան

Լ. Մնացականյան

Գ. Քոչարյան